ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Անկախ Պետություններ Համագործակցության մասնակից պետությունները, ի դեմս իրենց Կառավարությունների, այսուհետ՝ Կողմեր,

ելնելով միջազգային ավտոմոբիլային փոխադրումների ժամանակ ուղեւորների կյանքի եւ առողջության պաշտպանության անհրաժեշտությունից,

ընդունելով ավտոմոբիլային տրանսպորտով միջազգային փոխադրումների ժամանակ ուղեւորներին՝ նրանց առողջությանը հասցված վնասի հատուցման իրավունքը,

ձգտելով ապահովել միանման մոտեցում ավտոմոբիլային տրանսպորտով միջազգային փոխադրումների ժամանակ դժբախտ պատահարների դեպքում ուղեւորների կամ նրանց ժառանգների շահերի պաշտպանության հարցում, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Սույն Համաձայնագրում օգտագործվող հասկացություններն ունեն հետեւյալ նշանակությունները.

միջազգային փոխադրում՝ ուղեւորների միջազգային ավտոմոբիլային փոխադրում, որն իրականացվում է ավտոբուսներով առնվազն երկու Կողմերի տարածքով՝ փոխադրման պայմանագրի հիման վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ մեկնման եւ ժամանման կետերը գտնվում են մեկ պետության տարածքում,

ուղեւորների կանոնավոր փոխադրում՝ միջազգային փոխադրում, որն իրականացվում է ավտոբուսի երթեւեկության համաձայնեցված չվացուցակով եւ ուղերթով՝ մեկնման, ժամանման եւ կանգառի կետերի նշումով,

ուղեւորների անկանոն փոխադրում՝ միջազգային փոխադրում, որի դեպքում դրա իրականացման պայմանները, յուրաքանչյուր առանձին դեպքում, որոշվում են պատվիրատուի եւ փոխադրողի համաձայնությամբ,

փոխադրման պայմանագիր՝ պայմանագիր, որը կնքվում է փոխադրողի եւ ուղեւորի միջեւ՝ տրանսպորտային ծառայություն մատուցելու համար,

ավտոբուս՝ ուղեւորների եւ ուղեբեռների փոխադրման համար նախատեսված ավտոտրանսպորտային միջոց, որն ունի ոչ պակաս, քան 7 նստատեղ, չհաշված վարորդի տեղը, փոխադրող՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը լիցենզիայի հիման վրա իրականացնում է ուղեւորների միջազգային փոխադրում եւ գրանցված է որպես ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտ, իր գտնվելու վայրի պետության օրենսդրության համաձայն,

ուղեւոր՝ ֆիզիկական անձ, որն իր անունից կամ իր կողմից կնքված փոխադրման պայմանագրին համապատասխան, փոխադրվում է փոխադրողի կողմից,

երթեւեկության փաստաթուղթ՝ անհատական կամ խմբակային երթեւեկության տոմս, ուղեգիր կամ այլ փաստաթուղթ, որը վկայում է փոխադրողի եւ ուղեւորի միջեւ փոխադրման պայմանագրի կնքման եւ միջազգային փոխադրումների ժամանակ դժբախտ պատահարներից ուղեւորի ապահովագրության մասին,

կարգավորող կազմակերպություն՝ ապահովագրողների միություն, որը ստեղծվում է Կողմերից յուրաքանչյուրի օրենսդրությամբ նախատեսված կարգով եւ պայմաններով՝ միջազգային փոխադրումների ժամանակ ուղեւորների պարտադիր ապահովագրության հետ կապված հարցերի լուծման նպատակով,

ապահովագրող՝ իրավաբանական անձ, որն իրավունք ունի միջազգային փոխադրումների ժամանակ կատարել ուղեւորների պարտադիր ապահովագրություն եւ որը փոխադրողի հետ կնքել է միջազգային փոխադրումների ժամանակ դժբախտ դեպքից ուղեւորի պարտադիր ապահովագրության պայմանագիր,

ապահովագրվող՝ փոխադրող, որը ապահովագրողի հետ կնքել է միջազգային փոխադրումների ժամանակ դժբախտ դեպքից ուղեւորների պարտադիր ապահովագրության պայմանագիր,

ապահովագրական պոլիս՝ ապահովագրողի կողմից ապահովագրվողին կամ ուղեւորին՝ որպես միջազգային փոխադրումների ժամանակ դժբախտ դեպքերից պարտադիր ապահովագրության պայմանագրի կնքման փաստի պաշտոնական հաստատում տրվող փաստաթուղթ,

ապահովագրական դեպք՝ պատահար (դժբախտ դեպք), որը ուղեւորի առողջությանը վնաս է հասցրել կամ նրա մահվան պատճառ է դարձել եւ որը տեղի է ունեցել մեկնման կետից ավտոբուս նստելու համար ուղեւորի կառամատույց կամ նստեցման հարթակ դուրս գալու պահից մինչեւ ժամանման կետում կառամատույցից կամ նստեցման հարթակից իջնելու պահը՝ ճանապարհատրանսպորտային պատահարի արդյունքում,

ապահովագրական մուծում՝ վճար, որն ապահովագրվողը մուծում է ապահովագրողին՝ միջազգային փոխադրումների ժամանակ դժբախտ դեպքերից ուղեւորի պարտադիր ապահովագրության պայմանագրին համապատասխան,

ապահովագրական սակագին՝ միջազգային փոխադրումների ժամանակ դժբախտ դեպքերից ուղեւորների պարտադիր ապահովագրության ժամանակ Կողմերի իրավասու մարմինների կողմից սահմանված ապահովագրական վճարի չափ,

ապահովագրական վճար՝ դրամական գումար, որն ապահովագրողը վճարում է միջազգային փոխադրումների ժամանակ ապահովագրական դեպքից տուժած ուղեւորին կամ, նրա մահվան դեպքում, ժառանգներին,

ապահովագրողի պատասխանատվության սահման՝ Կողմերից յուրաքանչյուրի ազգային օրենսդրությամբ սահմանված դրամական գումարի (ապահովագրության վճարի) առավելագույն չափը, որը ապահովագրողը վճարում է միջազգային փոխադրումների ժամանակ ապահովագրական դեպքից տուժած ուղեւորին, կամ էլ նրա ժառանգներին:

ՀՈԴՎԱԾ 2

Սույն Համաձայնագրին համապատասխան, Կողմերն իրենց տարածքներում սահմանում են ավտոմոբիլային տրանսպորտով ուղեւորների կանոնավոր եւ անկանոն միջազգային փոխադրումներ կատարելու ժամանակ դժբախտ դեպքերից ուղեւորների պարտադիր ապահովագրում:

ՀՈԴՎԱԾ 3

1. Չի թույլատրվում կատարել ուղեւորների միջազգային ավտոմոբիլային փոխադրումներ առանց ապահովագրողի եւ փոխադրողի միջեւ միջազգային փոխադրումների ժամանակ դժբախտ դեպքերից ուղեւորների պարտադիր ապահովագրության պայմանագիր (այսուհետ՝ ուղեւորների ապահովագրության պայմանագիր) կնքելու:

2. Միջազգային փոխադրումների ժամանակ դժբախտ պատահարներից ուղեւորների պարտադիր ապահովագրումը կատարվում է Կողմերի ազգային օրենսդրությամբ նախատեսված կարգով՝ ապահովագրողի եւ փոխադրողի միջեւ համապատասխան պայմանագրեր կնքելու միջոցով:

3. Կանոնավոր միջազգային փոխադրումներ կատարելիս ուղեւորի պարտադիր ապահովագրումը հաստատվում է ուղեւորի երթեւեկության փաստաթղթով:

Ուղեւորների անկանոն միջազգային փոխադրումներ կատարելիս ուղեւորների ապահովագրումը հաստատող փաստաթուղթ է հանդիսանում ապահովագրական պոլիսը, որը ձեւակերպում է ապահովագրողը անհատապես յուրաքանչյուր ուղեւորի կամ այդ ուղեւորների խմբի համար, ըստ ուղեւորների ցուցակի:

Երթեւեկության փաստաթղթի սխալ ձեւակերպման կամ ապահովագրական պոլիսը կորցնելու դեպքում ուղեւորի պարտադիր ապահովագրության պայմանագիրը պահպանում է

իր ուժը:

ՀՈԴՎԱԾ 4

Միջազգային փոխադրումների ժամանակ ուղեւորների պարտադիր ապահովագրումն իրականացնում է ապահովագրողը՝ գործունեության տվյալ տեսակի համար համապատասխան
լիցենզիայի հիման վրա:

Կողմերից մեկի տարածքում կնքված ուղեւորների ապահովագրության պայմանագիրը իսկական է ճանաչվում մյուս Կողմերի տարածքում:

ՀՈԴՎԱԾ 5

1. Ապահովագրվողի հետ կնքված ուղեւորների ապահովագրության պայմանագրի համաձայն, ապահովագրողը պարտավոր է հատուցել միջազգային փոխադրումների ժամանակ
տուժած ուղեւորին կամ նրա ժառանգներին այն վնասը, որը կապված է ուղեւորի մահվան, մարմնական վնասվածքների, կամ առողջությանը հասցված ցանկացած այլ վնասի հետ, որը առաջ է եկել այդ փոխադրման ժամանակ տեղի ունեցած ապահովագրական դեպքից:

2. Ապահովագրական դեպք առաջանալիս յուրաքանչյուր Կողմի կարգավորող կազմակերպությունը կամ ապահովագրողը պարտավոր են կատարել ապահովագրական վճարում, անկախ ապահովագրական կազմակերպության գտնվելու վայրից, որի հետ փոխադրողը կնքել է ուղեւորների ապահովագրության պայմանագիր՝ այդ պայմանագիրը կնքած ապահովագրողի կողմից մուծված գումարի հետագա փոխհատուցմամբ:

ՀՈԴՎԱԾ 6

1. Ապահովագրական մուծումները կատարելու համար փոխադրողը (ապահովագրվողը) սահմանված ապահովագրական սակագներով ապահովագրողին է փոխանցում ապահովագրական
մուծումները:

2. Այն ուղեւորները, որոնք միջազգային փոխադրման ժամանակ օգտվում են անվճար կամ զեղչով երթեւեկության իրավունքից, նույնպես ենթակա են պարտադիր ապահովագրման:

Անվճար կամ զեղչով երթեւեկության իրավունքից օգտվող անձանց ապահովագրման հետ կապված ծախսերը հոգալու կարգը սահմանվում է Կողմերի իրավասու մարմինների կողմից:

ՀՈԴՎԱԾ 7

Միջազգային փոխադրումների ժամանակ ուղեւորների առողջությանը վնաս հասցնելու կամ նրանց մահվան յուրաքանչյուր փաստի առթիվ փոխադրողի կողմից կազմվում է ավտոմոբիլային տրանսպորտում ուղեւորին պատահած դժբախտ դեպքի մասին արձանագրություն այն Կողմի պետական լեզվով, որտեղ տեղի է ունեցել դեպքը, եւ/կամ ռուսերեն՝ միջազգային ավտոմոբիլային փոխադրումների ժամանակ ուղեւորների պարտադիր ապահովագրման մասին Կանոնակարգով նախատեսված կարգով (այսուհետ՝ Կանոնակարգ), որը հանդիսանում է սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

ՀՈԴՎԱԾ 8

1. Միջազգային փոխադրման ժամանակ դժբախտ դեպքերից ուղեւորների պարտադիր ապահովագրության դեպքում, ապահովագրողի պատասխանատվության սահմանը, հանձնարարվում է սահմանել ոչ պակաս, քան 2000 ԱՄՆ դոլարին համարժեք գումարի

չափով:
Ապահովագրողի պատասխանատվության սահմանը սույն կետում նախատեսվածից պակաս սահմանելու դեպքում այն ճանաչվում է անվավեր, սակայն չի հանգեցնում ուղեւորի հետ կնքված ապահովագրության պայմանագրի անվավերության ամբողջությամբ:
2. Ապահովագրման վճարը կատարվում է ուղեւորի ապահովագրական պայմանագիր կնքած ապահովագրողի սահմանված պատասխանատվության սահմանի շրջանակներում՝ հաշվի առնելով ուղեւորի առողջությանը հասցված վնասի չափը, եւ Կանոնակարգով նախատեսված կարգով:
3. Ապահովագրական դեպք առաջանալիս ապահովագրական վճարը կատարվում է անկախ ապահովագրական այլ տեսակների գծով վճարումներից, որոնք կատարվում են նույն դեպքի կապակցությամբ:
4. Ապահովագրական վճարի չափը որոշվում է Կանոնակարգով եւ ուղեւորների ապահովագրության պայմանագրի պայմաններին համապատասխան եւ կատարվում է վճարում կատարող ապահովագրողի գտնվելու վայրի երկրի ազգային տարադրամով՝ ապահովագրական վճարի կատարման օրվա դրությամբ այդ Կողմի կենտրոնական պետական բանկի կողմից սահմանված ԱՄՆ դոլարի փոխարժեքի համաձայն:

ՀՈԴՎԱԾ 9

1. Կողմերը, սույն Համաձայնագրի պայմաններին համապատասխան, պարտադիր ապահովագրություն կատարելու հետ կապված հարցերի լուծման նպատակով իրենց պետություններում սահմանում են կարգավորող կազմակերպություններ:
2. Կարգավորող կազմակերպությունների գործունեության նկատմամբ հսկողությունը կատարում են ապահովագրական գործունեության նկատմամբ պետական հսկողություն իրականացնող մարմինները:
3. Կարգավորող կազմակերպությունների եւ ապահովագրողների միջեւ փոխադարձ հաշվարկները, ապահովագրական ռեզերվների կազմակերպման եւ օգտագործման կարգը, տուժած ուղեւորներին կամ նրանց ժառանգներին ապահովագրական վճարումների կատարման կարգը սահմանվում են Կանոնակարգով:

ՀՈԴՎԱԾ 10

1. Ապահովագրական վճարումը կատարվում է սույն Համաձայնագրին եւ ուղեւորների ապահովագրության պայմանագրի պայմաններին համապատասխան՝ ապահովագրական դեպքի փաստը հաստատելու դեպքում:
2. Ապահովագրական վճարումների չափի վերաբերյալ տարաձայնությունների ծագման դեպքում վեճերը լուծվում են փոխադրողի հետ ուղեւորների ապահովագրության պայմանագիր կնքած ապահովագրողի պետության դատարանում:

ՀՈԴՎԱԾ 11

Ապահովագրողի գործունեության դադարեցման դեպքում, ապահովագրական վճարումը տուժած ուղեւորներին կամ նրանց ժառանգներին իրականացվում է ապահովագրողի իրավահաջորդի կամ ապահովագրողի գտնվելու վայրի երկրի կարգավորող կազմակերպության կողմից:

ՀՈԴՎԱԾ 12

Կողմերը պարտավորվում են միջոցներ ձեռնարկել ապահովագրական դեպքերի

առաջացման ռիսկի կրճատման ուղղությամբ, բարենպաստ պայմաններ ստեղծել ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման համար, ինչպես նաեւ համատեղ միջոցառումներ իրականացնել միջազգային երթուղիներում ճանապարհատրանսպորտային պատահարների պրոֆիլակտիկայի ուղղությամբ:

ՀՈԴՎԱԾ 13

Կողմերն իրենց պետություններում կապահովեն սույն Համաձայնագրի իրագործմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումների իրականացումը, ներառյալ՝ համապատասխան ազգային նորմատիվ-իրավական ակտերի նախապատրաստումն ու ընդունումը:

ՀՈԴՎԱԾ 14

Կողմերը միմյանց կտեղեկացնեն ի կատարումն սույն Համաձայնագրի ընդունված ներքին իրավական ակտերի մասին:

ՀՈԴՎԱԾ 15

Սույն Համաձայնագիրը կատարելիս Կողմերը կհամագործակցեն եւ միմյանց անհրաժեշտ օգնություն կցուցաբերեն:

ՀՈԴՎԱԾ 16

Սույն Համաձայնագրում Կողմերի համաձայնությամբ կարող են փոփոխություններ եւ լրացումներ կատարվել, որոնք կձեւակերպվեն համապատասխան արձանագրություններով եւ ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրի 19-րդ հոդվածով նախատեսված կարգով:

ՀՈԴՎԱԾ 17

Սույն Համաձայնագրի կիրառման եւ մեկնաբանման հետ կապված վիճելի հարցերը կլուծվեն շահագրգիռ Կողմերի միջեւ խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 18

Սույն Համաձայնագիրը բոլոր Կողմերի համաձայնությամբ բաց է դրա նպատակներն ու սկզբունքները կիսող պետությունների կողմից միանալու համար՝ ավանդապահին նման միանալու մասին փաստաթղթերը հանձնելու միջոցով: Միացումը համարվում է ուժի մեջ մտած ավանդապահի կողմից նման միացմանը Կողմերի համաձայն լինելու մասին վերջին ծանուցումը ստանալու օրվանից:

ՀՈԴՎԱԾ 19

Սույն Համաձայնագիրը կնքված է անորոշ ժամկետով եւ ուժի մեջ է մտնում այն ստորագրած Կողմերի կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ ծանուցումը ավանդապահին հանձնելու օրվանից:
Ներպետական ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ավանդապահին համապատասխան ծանուցումը հանձնելու օրվանից:

ՀՈԴՎԱԾ 20

Յուրաքանչյուր Կողմ կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից՝ այդ մասին

դուրս գալուց առնվազն 9 ամիս առաջ ավանդապահին գրավոր ծանուցում ուղարկելով:

Կատարված է Սարատով քաղաքում 1999 թվականի հունվարի 13-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր քարտուղարությունում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած յուրաքանչյուր պետությանը կուղարկի դրա հաստատված պատճենը:

Հավելված
Միջազգային ավտոմոբիլային
փոխադրումների ժամանակ
ուղեւորների պարտադիր
ապահովագրության մասին
1999 թ. հունվարի 13-ի
Համաձայնագրին կից

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Միջազգային ավտոմոբիլային փոխադրումների ժամանակ ուղեւորների պարտադիր ապահովագրության մասին Կանոնակարգը (այսուհետ՝ Կանոնակարգ) մշակված է միջազգային ավտոմոբիլային փոխադրումների ժամանակ ուղեւորների պարտադիր ապահովագրության մասին Համաձայնագրին (այսուհետ՝ Համաձայնագիր) համապատասխան
եւ կանոնակարգում է Համաձայնագրի մասնակից պետությունների (այսուհետ՝ Կողմեր) տարածքներում միջազգային ավտոմոբիլային փոխադրումների ժամանակ դժբախտ դեպքերից
ուղեւորների պարտադիր ապահովագրության կազմակերպման համակարգը եւ կարգը:
2. Կանոնակարգում օգտագործվող տերմինները ունեն նույն նշանակությունը, ինչ որ Համաձայնագրում:

2. ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՈՒՄ

3. Միջազգային ավտոմոբիլային փոխադրումներ կատարող փոխադրողը ապահովագրողի
հետ գրավոր ձեւով կնքում է ուղեւորների ապահովագրության պայմանագիր:
Փոխադրողից անհրաժեշտ փաստաթղթեր ստանալով՝ ապահովագրողը պարտավոր է տասնօրյա ժամկետում նրա հետ կնքել ուղեւորների ապահովագրման պայմանագիր:
Ուղեւորների ապահովագրման պայմանագրում պարտադիր կերպով նշվում են.
ապահովագրական մուծումների չափը,
ապահովագրական մուծումների գծով ապահովագրողների կողմից ապահովագրվողներին
վճարումների կարգը,
պայմանագրով կողմերի իրավունքներն ու պարտականությունները,
ապահովագրողի պատասխանատվության սահմանը,
ապահովագրական վճարի չափը,
ապահովագրական դեպքերը որոշող իրադարձությունների բնույթը,
ապահովագրողին ապահովագրական վճարում իրականացնելու պարտականությունից ազատող հանգամանքները,
պայմանագրի գործողության ժամկետը,
պայմանագրի փոփոխման եւ դադարեցման կարգը:

4. Ապահովագրական դեպքի առթիվ տուժած ուղեւորներին կամ նրանց ժառանգներին ապահովագրական վճարումներ կատարելու ապահովագրողի պարտավորությունները ծագում
են ուղեւորների ապահովագրության պայմանագրի ստորագրման օրվանից:

5. Ուղեւորների պարտադիր ապահովագրումն իրականացվում է ապահովագրողի կողմից՝ գործունեության տվյալ տեսակի համար լիցենզիայի հիման վրա: Ապահովագրողին լիցենզիայի հատկացումը կատարվում է ապահովագրական գործունեության նկատմամբ պետական հսկողություն իրականացնող իրավասու մարմնի կողմից, ազգային նորմատիվ-իրավական ակտերի հիման վրա՝ հաշվի առնելով կարգավորող կազմակերպության առաջարկները, որոնք համաձայնեցված են տրանսպորտի պետական կառավարման լիազորված մարմնի հետ:

6. Ուղեւորների ապահովագրության պայմանագրի գործողության վաղակետ դադարեցումը հնարավոր է հետեւյալ դեպքերում.

ա) փոխադրողի կամ ապահովագրողի գործունեության դադարեցման դեպքում,

բ) դատարանի կողմից պայմանագիրը անվավեր համարելու մասին որոշում ընդունելու դեպքում,

գ) ուղեւորների ապահովագրման պայմանագրի կողմերից մեկի պահանջով, եթե մյուս կողմը չի կատարում ապահովագրման պայմանագրի պայմանները,

դ) ապահովագրողի պետության օրենսդրությամբ սահմանված այլ հիմքերով:

7. Ուղեւորների ապահովագրման պայմանագրի վաղակետ դադարեցումը չի հանգեցնում ապահովագրական դեպքի կապակցությամբ ապահովագրողի կողմից ստանձնած
ապահովագրական վճարի կատարման պարտավորությունների դադարման, եթե դեպքը տեղի է
ունեցել ուղեւորների ապահովագրման պայմանագրի գործողության ժամանակ:

8. Ուղեւորների ապահովագրման պայմանագիր կնքած ապահովագրողը այլ ապահովագրողի (վերաապահովագրող) հետ կարող է կնքել ուղեւորների վերաապահովագրման պայմանագիր:

Վերաապահովագրողի հետ ուղեւորների վերաապահովագրման պայմանագիր կնքած ապահովագրողը ապահովագրվողի եւ ուղեւորների հանդեպ մնում է լրիվ ծավալով պատասխանատու, նրանց հետ կնքած ուղեւորների ապահովագրման պայմանագրին համապատասխան:

3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՄՈՒԾՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

9. Ուղեւորների ապահովագրական պայմանագրով ապահովագրողին ապահովագրվողի փոխանցած ապահովագրական մուծումները ձեւավորվում են երթեւեկության փաստաթղթերի
վաճառքից առաջացած միջոցների հաշվին:

Առանձին կատեգորիաների անձանց, այդ թվում նաեւ երեխաների, որոնք ներքին օրենսդրության համաձայն օգտվում են անվճար կամ զեղչով երթեւեկելու իրավունքից, պարտադիր ապահովագրման համար միջոցների կազմավորման եւ փոխանցման կարգը սահմանվում է Կողմերի իրավասու մարմինների կողմից:

10. Ուղեւորների պարտադիր ապահովագրման ժամանակ, ապահովագրական մուծման դրույքը սահմանվում է հաշվի առնելով միջազգային փոխադրումների հեռավորությունների հետեւյալ աստիճանավորումը՝ մինչեւ 200 կմ, 200-ից մինչեւ 500 կմ եւ 500 կմ-ից ավել:

11. Ապահովագրվողների կողմից ուղեւորների ապահովագրման պայմանագրով մուծումների փոխանցումը կատարվում է առնվազն ամիսը մեկ անգամ:

Ուղեւորների ապահովագրման պայմանագրում պետք է նախատեսված լինի, որ առաջին ապահովագրական մուծումը հաշվարկվում է՝ կախված է ապահովագրվողի կողմից վճարմանը նախորդող ամսվա ընթացքում երթեւեկության փաստաթղթերի վաճառքից ստացված գումարից, կամ, եթե դա առաջին փոխադրումն է՝ կախված փոխադրման պլանավորվող ծավալից եւ դրամական միջոցների սպասվելիք չափից:

12. Ապահովագրվողները պարտադիր կարգով վարում են ապահովագրական պոլիսների, վաճառված երթեւեկության փաստաթղթերի եւ դրանց վաճառքից ստացված միջոցների հաշվառում:

Ապահովագրական մուծումների փոխանցման հետ միաժամանակ ապահովագրվողը գրավոր ձեւով տեղեկատվություն է տրամադրում ապահովագրողին հաշվետու ժամանակահատվածում վաճառված երթեւեկության փաստաթղթերի, տրված ապահովագրական պոլիսների եւ փոխադրված ուղեւորների քանակի մասին, ինչպես նաեւ ամբողջական տեղեկատվություն անցած ժամանակահատվածում տեղի ունեցած ապահովագրական դեպքերի մասին:

4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

13. Ապահովագրական դեպքի ժամանակ ապահովագրական վճարը տուժած ուղեւորին կամ նրա ժառանգներին, անկախ նրա քաղաքացիությունից կամ բնակության վայրից, կատարվում է ցանկացած Կողմի տարածքում՝ ուղեւորի մեկնման երկրում կնքված ապահովագրական պայմանագրի պայմաններով:

14. Ապահովագրական վճարը ստանալու համար տուժած ուղեւորները կամ նրանց ժառանգները պետք է դիմեն ուղեւորների պարտադիր ապահովագրում կատարող ցանկացած ապահովագրողի կամ կանոնակարգող կազմակերպությանը: Այսպիսի ապահովագրողների եւ կանոնակարգող կազմակերպությունների մասին տեղեկությունը ուղեւորներին գրավոր ձեւով տրամադրում է փոխադրողը: Այդ տեղեկատվության տրամադրման միջոցը նախատեսվում է ուղեւորների ապահովագրման պայմանագրում:

15. Ապահովագրական վճարի չափը սահմանվում է ազգային նորմատիվ-իրավական ակտերի հիման վրա, կախված է ապահովագրված ուղեւորի առողջությանը հասցված վնասի չափից եւ չի կարող լինել պակաս, քան.

ա) ապահովագրողի սահմանված պատասխանատվության սահմանը՝ ուղեւորի մահվան կամ նրա առողջությանը ծանր վնաս հասցնելու դեպքում (վնաս, որը վտանգավոր է մարդու կյանքի համար, կապված է տեսողության, լսողության, խոսքի, օրգանի կամ դրա ֆունկցիայի կորստի, դեմքի այլանդակվածության եւ ընդհանուր աշխատունակության զգալի եւ կայուն՝ ոչ քիչ, քան 1/3-ի կորստի հետ, կամ մասնագիտական աշխատունակության կորստի հետ),

բ) ապահովագրողի սահմանված պատասխանատվության սահմանի 60%-ը՝ առողջությանը հասցված միջին ծանրության վնասի դեպքում (վնաս, որը վտանգավոր չէ կյանքի համար, որը ծանր հետեւանքներ չի ունեցել, բայց առաջացրել է առողջության երկարատեւ խաթարում կամ ընդհանուր աշխատունակության զգալի եւ կայուն՝ ոչ քիչ, քան 1/3-ի կորուստ),

գ) ապահովագրողի սահմանված պատասխանատվության սահմանի 20%-ը՝ առողջությանը հասցված թեթեւ ծանրության վնասի դեպքում (վնաս, որը առաջացրել է առողջության կարճատեւ խաթարում կամ ընդհանուր աշխատունակության աննշան կորուստ):

16. Ապահովագրական վճարը կատարում է ապահովագրողը կամ կարգավորող կազմակերպությունը.

գրավոր դիմումի հիման վրա, որին կցվում է երթեւեկության փաստաթուղթը կամ ապահովագրական պոլիսը, իսկ երթեւեկության փաստաթղթի կորստի դեպքում՝ փոխադրողի կողմից հաստատված դրա պատճենը կամ երթեւեկության տոմսերի վաճառքի ամփոփագրի պատճենը,

ավտոմոբիլային տրանսպորտում ուղեւորի հետ տեղի ունեցած դժբախտ դեպքի մասին արձանագրության բնագրի հիման վրա, որը կազմված է փոխադրողի կողմից սույն

Կանոնակարգին կցված ձեւով, հաստատված է ճանապարհատրանսպորտային պատահարները
քննող պետական մարմնի կողմից,

բժշկական հիմնարկության տեղեկանքի հիման վրա, որը հաստատում է ուղեւորի առողջությանը հասցված վնասի փաստը եւ աստիճանը, կամ ուղեւորի մահվան վկայականի հիման վրա,

ժառանգության իրավունքը հաստատող փաստաթղթի հիման վրա (ժառանգների համար՝ ուղեւորի մահվան դեպքում):

17. Ավտոմոբիլային տրանսպորտում ուղեւորի հետ տեղի ունեցած դժբախտ դեպքի մասին արձանագրությունը (Հավելված) փոխադրողը (ապահովագրվողը) կազմում է 3 օրինակից՝ ապահովագրական դեպքի կատարման վայրի պետության ճանապարհային երթեւեկության անվտանգության նկատմամբ հսկողություն իրականացնող մարմնի ներկայացուցչի կողմից կազմված եւ հաստատված ճանապարհատրանսպորտային պատահարի
մասին ակտի հիման վրա: Այդ արձանագրության առաջին օրինակը փոխադրողը (ապահովագրվողը) փոխանցում է տուժած ուղեւորին կամ նրա ժառանգներին, իսկ երկրորդ օրինակը ճանապարհատրանսպորտային պատահարի պահից սկսած 10 օրվա ընթացքում ուղարկվում է ապահովագրողին, որը կնքել է ուղեւորների ապահովագրման պայմանագիրը:

Փոխադրողը պարտավոր է դժբախտ դեպքի մասին արձանագրությունը ուղարկել տուժած ուղեւորին կամ նրա ժառանգներին՝ ըստ նրանց պահանջման վայրի:

18. Ապահովագրական վճարման համար հիմք հանդիսացող փաստաթղթերի Կողմերի փոխադարձ ճանաչման հարցը լուծվում է Կողմերի կարգավորող կազմակերպությունների միջեւ երկկողմ պայմանագրերի հիման վրա:

19. Ապահովագրական վճարումը տուժած ուղեւորին կամ նրա ժառանգներին կատարում է ապահովագրողը, որը պարտավոր է կատարել ապահովագրական վճարումը կամ
կարգավորող կազմակերպությունը սույն Կանոնակարգի 16-րդ կետում նշված փաստաթղթերի ստացման պահից սկսած 10 բանկային օրվա ընթացքում:

Ապահովագրական վճարման ուշացման դեպքում ապահովագրողը կամ կարգավորող կազմակերպությունը տուժած ուղեւորներին կամ նրանց ժառանգներին լրացուցիչ վճարում են պահվող միջոցների գումարից տոկոս՝ պարտավորությունների կատարման օրը պետական վարկային հաստատության սահմանած բանկային տոկոսադրույքով:

20. Ապահովագրողը կամ կարգավորող կազմակերպությունը ազատվում են ապահովագրական վճարում կատարելու պարտականությունից, եթե դատարանի կողմից հաստատվի այնպիսի դիտավորյալ գործողությունների կատարման փաստը, որոնք առաջացրել են ապահովագրական դեպքը կամ նպաստել են դրա առաջացմանը:

21. Ապահովագրական վճարումը մերժելու մասին որոշումը կարգավորող կազմակերպության կամ ապահովագրողի կողմից 10 օրվա ընթացքում հաղորդվում է տուժած ուղեւորին կամ նրա ժառանգներին գրավոր՝ մերժման պատճառների հիմնավորմամբ:

22. Ապահովագրական վճարման հետ կապված վեճերը ենթակա են քննարկման փոխադրողի հետ ուղեւորների ապահովագրման պայմանագիր կնքած ապահովագրողի երկրի
դատարանում:

23. Ապահովագրողը կամ կարգավորող կազմակերպությունը ունեն ապահովագրական վճարումների հետ կապված իրենց կատարած ծախսերի՝ ռեգրեսիվ կարգով հատուցման իրավունք:

Նշված ծախսերի հատուցման հայցը ներկայացվում է տեղի ունեցած ապահովագրական դեպքի համար մեղավոր ցանկացած կողմին, այդ թվում նաեւ ուղեւորների ապահովագրման պայմանագիր կնքած փոխադրողին:

5. Ապահովագրական ռեզերվների ձեւավորումն ու օգտագործումը

24. Ուղեւորների ապահովագրման պայմանագրերով ապահովագրական վճարումների ապահովման եւ ապահովագրական դեպքերի առաջացման ռիսկի կրճատման նպատակով ապահովագրողները ապահովագրական մուծումների (պարգեւատրումների), ներդրումային եւ այլ գործունեությունից ստացված եկամուտների հաշվին ձեւավորում են ապահովագրական ռեզերվ եւ նախազգուշական միջոցառումների ռեզերվ, իսկ կարգավորող
կազմակերպությունը՝ կենտրոնացված ապահովագրական հիմնադրամ:

Կենտրոնացված ապահովագրական հիմնադրամ մուծումները փոխանցվում են ապահովագրողների կողմից կարգավորող կազմակերպության հետ կնքված պայմանագրերի
հիման վրա՝ առնվազն եռամսյակը մեկ անգամ:

25. Ապահովագրական մուծումների ընդհանուր գումարի բաշխումը կատարվում է ապահովագրողների կողմից ազգային նորմատիվ-իրավական ակտերի հիման վրա, որոնցում
հանձնարարվում է հաշվի առնել հետեւյալ տոկոսային հարաբերությունները.

60% (ոչ պակաս)՝ տուժած ուղեւորներին ապահովագրական վճարների ապահովման համար,

25% (ոչ ավել)՝ նախազգուշական միջոցառումների ռեզերվի համար,

15%՝ կենտրոնացված ապահովագրական հիմնադրամ:

26. Նախազգուշական միջոցառումների ռեզերվի բոլոր միջոցները ուղղվում են հետեւյալ միջոցառումների ֆինանսավորմանը.

միջազգային երթուղիներում ուղեւորատար ավտոտրանսպորտի աշխատանքի ոչ վթարային մեթոդների տարածում ու քարոզչություն,

միջազգային հաղորդակցության ավտոբուսների վարորդների մասնագիտական վարպետության բարձրացում,

միջազգային ուղեւորատար փոխադրումներ իրականացնող ավտոտրանսպորտային ձեռնարկությունների եւ կազմակերպությունների նյութատեխնիկական բազայի բարելավում,

միջազգային երթուղիներում դիսպետչերատեղեկատվական կապի զարգացում:

27. Կենտրոնացված ապահովագրական հիմնադրամի միջոցներն օգտագործվում են կարգավորող կազմակերպության կողմից հետեւյալ նպատակներով.

ապահովագրական վճարումների կատարում տուժած ուղեւորներին կամ նրանց ժառանգներին,

կարգավորող կազմակերպությունների եւ Կողմերի ապահովագրողների միջեւ ապահովագրական վճարումների գծով փոխհաշվարկների ապահովում,

ուղեւորների պարտադիր ապահովագրման գործերի վարում:

6. ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԸ

28. Կարգավորող կազմակերպության եւ Կողմերից մեկի ապահովագրողների միջեւ փոխհարաբերությունները, ներառյալ ապահովագրական վճարումների գծով փոխհաշվարկները, կարգավորում են կարգավորող կազմակերպության եւ ապահովագրողների միջեւ պայմանագրերով, որոնց կնքումը ապահովագրողների եւ կարգավորող կազմակերպության համար պարտադիր է:

29. Տուժած ուղեւորների նկատմամբ ապահովագրական վճարման մասով ապահովագրության պայմանագրով ստանձնած պարտավորությունները տվյալ ուղեւորների հետ ապահովագրության պայմանագիր կնքած ապահովագրողի փոխարեն մյուս Կողմի ապահովագրողի կամ կարգավորող կազմակերպության կողմից կատարելու դեպքում, վերջիններիս միջեւ փոխհաշվարկներն իրականացնում են այդ պետությունների կարգավորող կազմակերպությունները, նրանց կողմից կնքված երկկողմ պայմանագրերին համապատասխան:

30. Կարգավորող կազմակերպությունների միջեւ ապահովագրական վճարներով փոխհաշվարկներն իրականացվում են նրանց կողմից յուրաքանչյուր անցած կիսամյակի

համար միմյանց ուղարկվող դեբետ-նոտաների հիման վրա:

Դեբետ-նոտաներում նշվում են յուրաքանչյուր ապահովագրական վճարի գումարները, որոնք կատարվել են ապահովագրողի կամ կարգավորող կազմակերպության կողմից՝ ուղեւորների ապահովագրման պայմանագիր կնքած ապահովագրողի կամ մյուս Կողմի կարգավորող կազմակերպության փոխարեն: Գումարները նշվում են ապահովագրական վճարումների կատարման պահի դրությամբ դոլարային համարժեքով:

Դեբետ-նոտան ուղարկվում է կիսամյակը վերջանալուց ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում:

31. Կիսամյակը վերջանալուց հետո՝ առաջին 20 օրվա ընթացքում կարգավորող կազմակերպությունները պարտավոր են միմյանց ծանուցել ստացված դեբետ-նոտաների վերաբերյալ ունեցած իրենց առարկությունների մասին:

Սույն հոդվածում նշված ժամկետի լրանալուց հետո կարգավորող կազմակերպությունների կողմից առարկությունների բացակայության դեպքում, դեբետ-նոտաները համարվում են նրանց կողմից հաստատված, եւ դրանցում նշված գումարները հաշվետու կիսամյակի ավարտից հետո 30 օրվա ընթացքում ենթակա են փոխանցման համապատասխան կարգավորող կազմակերպությանը:

Ստացված դեբետ-նոտաների մեջ նշված կարգավորող կազմակերպությունների կողմից չհամաձայնեցված գումարները հանվում են եւ անցած կիսամյակի համար փոխադարձ հաշվարկների ժամանակ հաշվի չեն առնվում: Այդ գումարների համաձայնեցումից հետո, դրանք կրկին անգամ ներառվում են ընթացիկ կիսամյակի դեբետ-նոտաների մեջ:

32. Կարգավորող կազմակերպության կողմից հաստատված դեբետ-նոտաներում նշված գումարների փոխանցման ուշացման դեպքում, նա լրացուցիչ տուժանք է վճարում՝ չվճարված գումարի տարեկան 12% հաշվարկով:

33. Փոխհաշվարկների ժամանակ հաշվի են առնվում ուղեւորների ապահովագրման պայմանագրի կատարման հետ կապված հետեւյալ ծախսերը՝

ա) տուժած ուղեւորներին կամ նրանց ժառանգներին ապահովագրական վճարների լրիվ գումարը,

բ) գործերի վարման հետ կապված կարգավորող կազմակերպության ծախսերը, բայց ոչ ավել, քան սույն կետի "ա" պարբերությունում նշված գումարի 15%-ը,

գ) տեխնիկական եւ բժշկական փորձաքննություն անցկացնելու ծախսեր, փաստաթղթերի թարգմանության ծախսեր, փաստաբանական ծախսեր եւ դատական պահումներ
եւ փաստաթղթերով հաստատված այլ ծախսեր, որոնք առաջանում են փոխհաշվարկների ժամանակ, բայց ոչ ավել, քան սույն կետի "ա" պարբերությունում նշված գումարի 30%-ը,

34. Ապահովագրման վճարումների հետ կապված կարգավորող կազմակերպությունների վեճերը լուծվում են պատասխանողի գտնվելու վայրի պետության դատարանով, եթե կարգավորող կազմակերպությունների միջեւ պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Հավելված
Միջազգային ավտոմոբիլային
փոխադրումների ժամանակ
ուղեւորների պարտադիր
ապահովագրության
Կանոնակարգին կից

Ձեռնարկության (փոխադրողի)
անկյունային կնիքի տեղը

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N --------

ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՒՄ ՈՒՂԵՎՈՐԻ ՀԵՏ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ
ԴԺԲԱԽՏ ԴԵՊՔԻ ՄԱՍԻՆ

Սույն արձանագրությամբ հաստատվում է, որ քաղաքացի (ազգանուն, անուն, հայրանուն, լրիվ)----------
անձնագիր, սերիան ---------- համարը ---------- տրված է ----------
---
բնակության հասցեն ----------

լինելով ավտոտրանսպորտային միջոցի (մակնիշը, պետական գրանցման համարը) -----
---------- ուղեւոր,
որը պատկանում է (իրավաբանական անձի լրիվ անվանումը, հասցեն) ----------
---
փոխադրվել է երթեւեկության փաստաթղթով (կամ ապահովագրական պոլիսով)
սերիա N ---------- երթուղի N ---------- որտեղից --------
դժբախտ պատահարի տեղը, ամսաթիվը եւ ժամանակը ----------

Ոեմ կողմից է ցույց տրվել առաջին բժշկական օգնությունը եւ որտեղ է տուժվածը փոխադրվել հետագա բուժման համար (բուժ. հաստատության անվանումը, տեղակայման հասցեն)----------
---
Նշված ավտոտրանսպորտային միջոցով ուղեւորի փոխադրումը ապահովագրված է ապահովագրական ընկերությունում (անվանումը, հասցեն) ----------
---
"----" ---------- 199 թ. N ---------- պայմանագրին համապատասխան
Տրված է ապահովագրական պոլիս ----------

Փոխադրողի (ապահովագրողի) Ա.Ա.Հ.
ստորագրությունը
"----"---------- 199 թ. ----------

ստորագրությունը ----------

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2000 թվականի հոկտեմբերի 3-ից: